

Ինչ էսաց՝ Գաւիթ էսաց.— Ա՛ր՛ յիշեա իմ խացն ու գիշին, Տէր կենդանին, ՄարուԹայ բանձր Աստուարածին, խաչ պատրազին վեար Գաւթը աջ թիւին:

Էսաց.— Գէ՛ զքի թափ տու:

Ինչ էսաց, Գաւիթ զինք թափ իտու, զնջլի կտուրքիր մէ¹⁾ կինաց յարաւել մէ կինաց յարեմուտ:

Ձինք խրօխպէր էլան խրօխպէր յիտիւ Օղան թագաւուրին կինաց, Գաւիթ յիտիւ Տողան թագաւուրին: Բռնիցին Օղան, Տողան թագաւուր, բիրին. բիրին, կապիցին, տուին յէռջիւ իրանց, կ'կեան:

Ճամբսը կէսին էսաց.— Խրօխպէր, արիւ տաքցաւ՝ իմ ջան տաքցաւ, իս եամ²⁾, լեողկանամ, կեամ. տիւ մողիեաթ³⁾ կաց, չ'փախին:

Էսաց.— Աղէկ:

Գաւիթ էլաւ, կինաց. չուր կինաց լեողկանալու, էկաւ,— խրօխպէր էրկու թագաւորը վիզ կտրեր էր:

Գաւիթ էկաւ: Էսաց.— Ջանմ, աչքիր բեալ բեալ էրին, էկին դեախ զը, իս վախացայ, վիզքիր կտրիցի:

Մէկ էլ տեսան՝ մէկ մարդ իկիր ի, հա՛ կ'վերուցի, կ'աչկի, կ'թալը: Գաւիթ կ'կանչը, կ'ասը.— Յիտիւ վի՛ կան կ'կեաս, էն ինչ տիւ յիտիւ կան կ'կեաս, իս սպանիր իմ (զԳաւիթ չի ճանչնայ, Գաւիթ էնքան կուռի, իլի արընուԹ⁴⁾), համա Գաւիթ էնու կ'ըճանչնայ). էսաց՝ էն ինչ յիտիւ կան կ'կեաս, իս սպանիր իմ, արի՛ ընձը առ:

Էսաց.— Իս էնու սպանուկ լէշն էլ տեսնամ, քանց քե աղէկը ընձը խամա:

— Որ անցկուն ի, իս տիւ տը կուռինք:

Էլան, կուռան. կուռան, թող ու գիւման զդեաշտ բռնից.

1) Մէկ: 2) Գնում եմ, կ'երթամ: 3) Ձգուշացիր, պահիր: 4) Արիւնոտ: